Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Երևանի քաղաքապետարանում առանձին գործառույթների և խնդիրների իրականացման նպատակով խորհրդատու ներգրավելու մասին

Աշխատանքների համառոտ նկարագրությունը՝ Խորհրդատուի ներգրավման նպատակն է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված Երևանի քաղաքապետի կողմից իրականացվող լիազորությունների շրջանակներում առանձին գործառույթների իրականացումը.

Խորհրդատուին ներկայացվող պահանջները՝

- ՀՀ քաղաքացիություն
- միջազգային հարաբերություններ մասնագիտությամբ բարձրագույն կրթություն
- Առնվազն 5 տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ
- Երևանի քաղաքապետարանի գործառույթներին վերաբերվող և կիրառվող ընթացակարգերի իմացություն
- Օտար լեզուների (անգլերեն և ռուսերեն ազատ) իմացություն:

Խորհրդատուի պարտականությունների համառոտ շրջանակը՝

- համագործակցություն Հայաստանի Հանրապետության այլ համայնքների ղեկավարների աշխատակազմերի հետ.
- այլ քաղաքների հետ բարեկամական կապերի հաստատում և համագործակցություն.
- մասնակցություն աշխատակազմի գործավարության կազմակերպչական աշխատանքներին.
- աջակցություն քաղաքապետի որոշումների, կարգադրությունների նախագծերի նախապատրաստման աշխատանքներին
- Երևանի քաղաքապետարան մուտքագրված առաջարկությունների, դիմումների ու բողոքների քննարկման և ընթացքի նկատմամբ վերահսկողություն.
- կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներից, քաղաքապետարանի ենթակայությանը հանձնված կազմակերպություններից անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու իրավունք.
- համագործակցություն և աջակցություն Երևանի զարգացման, ռազմավարական, տնտեսական և այլ գործող ու առաջարկվող ծրագրերին.
- աշխատակազմում անցկացվող քննարկումներին և խորհրդակցություններին մասնակցություն.
- իրականացվող աշխատանքների ընթացքի, որակի, ժամկետների վերաբերյալ պարբերական զեկույցների, հաշվետվությունների, վերլուծությունների կազմում և ներկայացում քաղաքապետին գրավոր և (կամ) բանավոր տարբերակով

Թեկնածուները պետք է մինչև 2024 թվականի հոկտեմբերի 31-ը՝ ժամը 17:00-ը, Երևանի քաղաքապետարանի մարդկային ռեսուրսների կառավարման վարչություն կամ margarita.petrosyan@yerevan.am էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. դիմում.

2. ինքնակենսագրությունը,

3. անձնագրի կամ նույնականացման քարտի լուսապատճենները (եթե անձը նույնականացման կամ սոցիալական քարտ չի ներկայացնում, ապա անհրաժեշտ է ներկայացնել անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանքի կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանքի լուսապատճենը),

4. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի լուսապատճենը,

5. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթ (եր)ի լուսապատճեն (ներ)ը.

6. Արական սեռի անձինք ներկայացնում են զինվորական գրքույկի (բոլոր գրառում ունեցող էջերի) լուսապատճենը կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի լուսապատճենը.

7. Մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի: